Նոտարական ակտի կոդ: 699-20210728-37-5268580
Նոտարական ակտի գաղտնագիր: TJP8PU

ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Արթիկ
երկու հազար քսանմեկ թվականի հուլիսի քսանութ 28/07/2021

Հայաստանի Հանրապետության քաղաքացի **ԹՈՐԳՈՄ ՄՈՒՇԵՂԻ ՄԿՐՏՉՅԱՆԸ**, ծնված՝ 11/02/1989թ-ին, ՀԾՀ՝ 2102890384, նույնականացման քարտ՝ 012255469, տրված՝ 005-ի կողմից, 23/04/2021թ-ին, բնակության հասցե՝ ՇԻՐԱԿ, ԱՐԹԻԿ, Գ. ՆԺԴԵՀԻ Փ., 11 Տ, այսուհետ՝ <<Վարձատու>> մի կողմից և «ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» Պետական մարմին, հասցե՝ ԿԵՆՏՐՈՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Փ. / 13, գրանցման համար՝ 286.184.1024769, ՀՎՀՀ՝ 02505511, այսուհետ՝ <<Վարձակալ>>, ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ **ԱՇՈՏ ԱՐՇԱԿՅԱՆԻ**, որի անունից համաձայն 26.07.2021(քսանվեցը հուլիսի երկու հազար քսանմեկ) թվականին տրված N 02/12-1/28861-2021 լիազորագրի հանդես է գալիս լիազորված անձ՝ **ԱՐԹՈՒՐ ՍԱՇԱՅԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ**, ծնված՝ 08/06/1977թ-ին, ՀԾՀ՝ 1814770100, նույնականացման քարտ՝ 001252139, տրված՝ 016-ի կողմից, 09/04/2014թ-ին, բնակության հասցե՝ ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ԱՆԻ ԹՂՄ. 5 Փ., 6 Շ, 15ԲՆ, մյուս կողմից, միասին անվանվելով կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանն ու օգտագործմանը հանձնել սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, համայնք Արթիկ ք., Ե. Չարենցի փողոց, թիվ 3/1(երեք կոտորակ մեկ)-3/2(երեք կոտորակ երկու) գրասենյակ հասցեում գտնվող Օբյեկտից առանձնացվող՝ 73.54(յոթանասուներեք ամբողջ հիսունչորս)ք.մ. մակերեսով տարածքը, համաձայն կողմերի կողմից ներկայացրած հատակագծի, այսուհետ՝ <<Օբյեկտ>>, որը կցվում է պայմանագրին և հանդիսանում է նրա անբաժանելի մասը:

1.2.Օբյեկտը սեփականության իրավունքով պատկանում է <<Վարձատու>>-ին, ինչը հաստատվում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 27122019-08-0031, տրված՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանումից, 27.12.2019(քսանյոթը դեկտեմբերի երկու հազար տասնիններ) թվականին:

1.3.<<Օբյեկտ>>-ը վարձակալվում է Վարձակալի կանոնադրական խնդիրներից բխող աշխատանքային գործունեության իրականացման համար:

1.4.Վարձատուն երաշխավորում է, որ Գույքը վաճառված, գրավ դրված, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ երրորդ անձանց իրավունքներով, վեճի առարկա չէ և արգելանքի տակ չի գտնվում, ինչը հաստատվում է նաև Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանումից 28.07.2021(քսանութը հուլիսի երկու հազար քսանմեկ) թվականին տրված N ՄՏ-28072021-08-0222 անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքով(193.77քմ. շենք շինություններից՝ 161.63քմ. Գրասենյակ, 29.8քմ. Կից կառույց, 2.34քմ. Կից կառույց):

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտը Վարձատուն պարտավոր է հանձնել հանձնման-ընդունման ակտով: Հանձնման-ընդունման ակտն ստորագրում են Վարձատուն և Վարձակալը:

2.2 Սույն պայմանագիրը գործում է մինչև 25.12.2022թ. (քսանհինգը դեկտեմբերի երկու հազար քսաներկու թվականը):

3. ՎԱՐՁԱՎՃԱՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտի ամսական վարձավճարը կազմում է 150.000(մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ գումար, ներառյալ եկամտային հարկը:

3.2 Սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը՝ առանց եկամտային հարկի, Վարձակալը Վարձատուին է վճարում ամսական կտրվածքով՝ մինչև տվյալ ամսին հաջորդող ամսվա 20/քսան/-ը, իսկ դեկտեմբեր ամսվա համար՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25/քսանհինգ/-ը: Վարձակալը վարձավճարից հաշվարկվող եկամտային հարկը, որպես հարկային գործակալ, պահում և բյուջե է փոխանցում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

3.3 Վարձակալը վարձավճարը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վարձատուի 24100495807001 հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է երկկողմ հաստատված հանձման-ընդունման արձանագրության հիման վրա:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Վարձատուն պարտավոր է՝

4.1.1 Վարձակալին նախազգուշացնել սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների մասին,

4.1.2 Վարձակալած տարածքում ապահովել կոմունալ համակարգերի անխափանությունը, իսկ իր մեղքով առաջացած թերությունների դեպքում, վերացնել դրանք ոչ ուշ քան 2/երկու/ աշխատանքային օրվա ընթացքում,

4.1.3 Վարձակալած տարածքում ապահովել կոմունալ ծախսերի լրիվ ամբողջական կատարումը,

4.1.4 Ոչ ուշ, քան վեց ամիս առաջ, Վարձակալին գրավոր տեղեկացնել Օբյեկտն ազատելու անհրաժեշտության մասին:

4.2 Վարձատուն իրավունք ունի՝

4.2.1 Վաղաժամկետ լուծել պայմանագիրը, եթե Վարձակալն էականորեն վատթարացրել է Օբյեկտի վիճակը, սույն պայմանագրի 3-րդ կետով նախատեսված կարգով, չափով և ժամկետներում չի վճարել վարձավճարը:

4.2.2 Վարձատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծելու վարձակալության պայմանագիրը՝ վեց ամիս առաջ գրավոր նախազգուշացնելով վարձակալին:

4.3 Վարձակալը պարտավոր է՝

4.3.1 Ժամանակին վճարել Օբյեկտն օգտագործելու համար պայմանագրով նախատեսված վարձավճարը:

4.3.2 Ապահովել Օբյեկտի ինժեներական ցանցերի, հաղորդակցության ուղիների և սարքավորումների պահպանվածությունը:

4.4 Վարձակալը իրավունք ունի՝

4.4.1 Եթե Վարձատուն Վարձակալին հանձնել է սույն պայմանագրի 1.1 կետին չհամապատասխանող Օբյեկտ, պահանջել հանձնելու համապատասխան Օբյեկտ կամ հրաժարվել հանձնված Օբյեկտից, իսկ եթե Օբյեկտի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը,

4.4.2 Օբյեկտը հանձնել ենթավարձակալության միայն Վարձատուի գրավոր համաձայնության դեպքում.

4.4.3 Վարձատուից պահանջել՝ իրեն տրամադրելու Օբյեկտին վերաբերող փաստաթղթերը:

4.4.4. Վարձակալը իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծելու վարձակալության պայմանագիրը՝ մեկ ամիս առաջ գրավոր նախազգուշացնելով վարձատուին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Վարձատուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարի 0,5 %-ի (զրո ամբողջ հինգ տասնորդական տոկոսի) չափով:

5.2 Սույն պայմանագրով նախատեսված Օբյեկտի հանձման ժամկետը խախտելու դեպքում Վարձակալը իրավունք ունի Վարձատուին ներկայացված գրավոր ծանուցմամբ պահանջելու վճարել յուրաքանչյուր ուշացված օրվա համար տույժ՝ պայմանագրի գնի 0.05 %-ի (զրո ամբողջ հինք հարյուրերորդական տոկոսի) չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Վարձատուին վճարման ենթակա գումարներից:

5.4 Վարձակալի կողմից սույն պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Վարձատուն իրավունք ունի Վարձակալին ներկայացված գրավոր ծանուցմամբ պահանջելու վճարել յուրաքանչյուր ուշացված օրվա համար տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական տոկոսի) չափով:

5.5 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.7 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ Վարձատուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Վարձակալը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Կողմերը չեն կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով մյուս Կողմի համար առաջացող

վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը:
6. Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը.
Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման, քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի ապահովման ու արդյունավետության բարձրացման նպատակով՝ սոցիալական ծառայություններ տրամադրող կառույցները, ինչպես նաև նոր ստեղծվող միասնական ընդունարանները, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող շենքերում և շինություններում տեղակայելուն ուղղված միջոցառումների արդյունքում՝ <<Ոչ բնակելի տարածքի վարձակալության>> պայմանագրով վարձակության հանձնված տարածքում աշխատանքային գործունեություն իրականացնող Ծառայության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ տարածք տեղակայման դեպքում, պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման՝ ցանկացած ժամանակ:
7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)
Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:
8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ
8.1 Սույն պայմանագրի շրջանակներում ցանկացած ծանուցումները և փաստաթղթերի հանձնումը կարող է կատարվել Կողմերի ընտրությամբ առձեռն հանձնելու կամ փոստային ծառայության միջոցով սույն պայմանագրով սահմանված հասցեին պատվիրված նամակ ուղարկելու միջոցով: Ընդ որում, եթե, փաստաթղթի հանձնումը կատարվել է փոստային ծառայության միջոցով՝ սույն պայմանագրով Կողմին հայտնի վերջին հասցեին, այն համարվում է ստացված, իսկ ծանուցման պարտավորությունը՝ պատշաճ կատարված, դրա ուղարկման օրվանից 7-րդ աշխատանքային օրը՝ անկախ դրա փաստացի ստացման հանգամանքից:
8.2 Սույն պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները՝ երեսուն օրյա ժամկետում պետական գրանցման:
8.3 Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումներն օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր, վավերացված են նոտարի կողմից և գրանցված են Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:
8.4 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Մեկ օրինակը պահվում է ՀՀ <<ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ>> նոտարական տարածքի նոտարական գործում, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, իսկ մյուս օրինակը տրվում է ներկայացնելու Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանում:
8.5 Նոտարի ներկայությամբ պայմանագիրը ստորագրող կողմերը հայտարարեցին, որ իրենք գործունակ են, ամբողջովին գիտակցում են և հասկանում պայմանագրով նախատեսված բոլոր կետերի իմաստը և նշանակությունը, ինչպես նաև հայտարարում են, որ պայմանագիրը ստորագրում են կամավոր և իրենց համար ձեռնտու պայմաններով:
8.6 Սույն պայմանագրի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարական գրասենյակում պահվող օրինակին:

<<Վարձատու>>՝

1. _____

<<Վարձակալ>>-ի լիազորված անձ՝

1. _____

28/07/2021 երկու հազար քսանմեկ թվականի հուլիսի քսանութին, սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ Հայաստանի Հանրապետության <<ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ>> նոտարական տարածքի նոտար՝ ԳԱԳԻԿ ՍԱՄՎԵԼԻ ԲԶՆՈՒՆՈՒՍ կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները և Օբյեկտի նկատմամբ <<Վարձատու>>-ի իրավունք(ներ)ը ստուգված են:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն՝ սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Օբյեկտի պետական միասնական կադաստր վարող պետական կառավարման հանրապետական մարմնի համապատասխան ստորաբաժանումում:

Գրանցված է գրանցամատյան թիվ---2821----------ով

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասներկու հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Գագիկ Սամվելի Բզնունի

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

ԹՈՐԳՈՄ ՄՈՒՇԵՂԻ ՍԿՐՏՉՅԱՆ

անուն,ազգանունը (անվանումը)

մարզ ՇԻՐԱԿ համայնք ԱՐԹԻԿ հասցե ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3/1 - 3/2

Մասշտաբ 1:100



				Թերթ	Թերթեր
Տնօրեն	Վ. Գրիգորյան		ԱՁ ՎԼԱԴԻՄԻՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ Վկայական N 0206 Տրված 29.05.2012 թ.	1	1
				23.06.2017 թ.	

Հ/Հ	Նպատակային դիմումատուն	Գործառնական նշանակությունը	Հարկ	Հարկայնություն	Սակերեսները (քմ)		Բարձրությունը (մ)	Ծավալը (խմ)	Կառուցման տարեթիվը	Տանիքի նյութը				Սեյսմատարածման աստիճանը				Պատերի շինանյութի տեսակները	Միջնապատերի նյութը		Սեյսմակայուն հարդարման ցուցակի կոդերի				
					Օրինական	Ինքնակամ				թիթեղ	շիֆեր	կղմինդր	այլ նյութ	անպատասխան	մինչև 50%	50-80%	80% և ավելի		փայտ	երկաթբետոն	սրբատաշ	երեսապատված	գիպսակ	սոսնձակիպ	առանց սոսնձակիպ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26
1	Հասարա-կական	Գրասենյակ	1	1	41.40		3.00	124.20	1931		√						√	Տուֆ	√						2
2	Հասարա-կական	Կից կառույց	1	1	29.80		2.90	86.42	2011		√						√	Տուֆ		√					2
3	Հասարա-կական	Կից կառույց	1	1	2.34		2.90	6.79	2014		√						√	Տուֆ		√					2

Շինության ընդհանուր մակերեսը (քմ)	Այդ թվում	
	Օրինական կառուցված (քմ)	Ինքնակամ կառուցված (քմ)
27	28	29
73.54	73.54	-

Կատարող՝ _____ (Ստորագրություն)

Վլադիմիր Գրիգորյան (Անուն, ազգանուն)

23/06/2017 թ (Ամիս, ամսաթիվ)

 Որակավորման վկայականի 206 (Համարը)

29.05.2012թ (Տրման ամիս, ամսաթիվ)

Իրավաբանական անձի 53.69589 (պետական գրանցման համարը)

ԱՁ <<Վլադիմիր Գրիգորյան>> (անվանումը)

Կ. Տ.

(Ստորագրություն)

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆՈՏԱՐԻԱԼ ՏԱՐԱԾՔ
ՀՀ ՆՈՏԱՐԻԱԼԱՅԻՆ ՊԱԼԱՏ
РА НОТАРИАЛЬНАЯ ТЕРРИТОРИЯ "ШИРАКСКИЙ МАРЗ"
RA "SHIRAK MARZ" NOTARIAL TERRITORY
NOTARY BZNUNI GAGIK
88656742

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 2 օգոստոսի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

,, Միասնական Սոցիալական Ծառայություն ,, Պետական մարմին

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Շիրակ, համայնք Արթիկ ք. Ե. Չարենցի փողոց 3/1-3/2 գրասենյակ

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր՝ վավերացված 28.07.2021 թվականին, գրանցամատյան թիվ 2821

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

ՎԿԱՅԱԿԱՆ N 02082021-08-0035, գաղտնաբառ՝ AC51ELTH1AXA

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	08-002-0043-0033-001	Գրասենյակ	73.54 քմ	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Ժամկետը՝ մինչև 25.12.2022 թվականը:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Գոհար Պողոսյան

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 02082021-08-0035, գաղտնաբառ՝ AC51ELTH1AXA

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Կադաստրի կոմիտե

Նոտարական ակտի կոդ: 699-20221214-117-6529708
Նոտարական ակտի գաղտնագիր: B3DBZK

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ փոփոխություն կատարելու վերաբերյալ)

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Արթիկ
երկու հազար քսաներկու թվականի դեկտեմբերի տասնչորս

Հայաստանի Հանրապետության քաղաքացի **ԹՈՐԳՈՄ ՄՈՒՇԵՂԻ ՄԿՐՏՉՅԱՆԸ**, ծնված՝ 11/02/1989թ-ին, ՀԾՀ՝ 2102890384, նույնականացման քարտ՝ 012255469, տրված՝ 005-ի կողմից, 23/04/2021թ-ին, բնակության հասցե՝ ՇԻՐԱԿ, ԱՐԹԻԿ, ԱՐԹԻԿ, Գ. ՆԺԴԵՀԻ Փ., 11 Տ, այսուհետ՝ <<Կողմ-1>>, մի կողմից և «ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» Պետական մարմինը, հասցե՝ Հայաստան, ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Փ., 13, 0010, գրանցման համար՝ 286.184.1024769, ՀՎՀՀ՝ 02505511, ի դեմս տնօրեն՝ **ԱԳՆԵՍԱ ՌԱՖԻԿԻ ԱՂԱԲԱԲՅԱՆԻ**, ծնված՝ 30/04/1977թ-ին, ՀԾՀ՝ 8004770010, նույնականացման քարտ՝ 009448887, տրված՝ 011-ի կողմից, 26/07/2018թ-ին, որի անունից համաձայն երկու հազար քսաներկու թվականի դեկտեմբերի ութին տրված թիվ 02/12-1/66856-22 լիազորագրի, հանդես է գալիս լիազորված անձ՝ **ՏԱՐՈՆ ՀԵՆՐԻԿԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԸ**, ծնված՝ 26/02/1980թ-ին, ՀԾՀ՝ 3602800415, նույնականացման քարտ՝ 010565166, տրված՝ 028-ի կողմից, 30/08/2018թ-ին, բնակության հասցե՝ ՇԻՐԱԿ, ԱՐԹԻԿ, ԱՐԹԻԿ, ՏՈՆԱԿԱՆՅԱՆ Փ., 38, Շ, 37ԲՆ, այսուհետ <<Կողմ-2>>, մյուս կողմից, միասին անվանվելով՝ ԿՈՂՄԵՐ, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Կողմ-1-ի և Կողմ-2-ի միջև Հայաստանի Հանրապետության <<ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ>> նոտարական տարածքի նոտարական գրասենյակում 28.07.2021(քսանութը հուլիսի երկու հազար քսանմեկ) թվականին վավերացված և գրանցամատյանի 2821 համարով գրանցված ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ կողմերը կատարում են հետևյալ փոփոխությունները.

2.Պայմանագրի 2.2 կետը փոփոխել և շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ պայմանագրի գործողության ժամկետ սահմանել մինչև 25.12.2023(երկու հազար քսաներեք թվականի դեկտեմբերի քսանհինգը):

3.Համաձայնագրով չսահմանված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի մյուս պայմանները մնում են անփոփոխ:

4.Սույն համաձայնագիրը համարվում է Հայաստանի Հանրապետության <<ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ>> նոտարական տարածքի նոտարական գրասենյակում 28.07.2021(քսանութը հուլիսի երկու հազար քսանմեկ) թվականին վավերացված և գրանցամատյանի 2821 համարով գրանցված ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ անբաժանելի մասը:

5.Սույն համաձայնագրի և Պայմանագրի դրույթների միջև հակասությունների դեպքում կիրառվում է սույն համաձայնագրի սահմանված դրույթը:

6.Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են վարձակալության պայմանագրով սահմանված կարգով:

7.Սույն համաձայնագրի կնքման և ձևակերպման հետ ծախսերը կատարում է ԹՈՐԳՈՄ ՄՈՒՇԵՂԻ ՄԿՐՏՉՅԱՆԸ:

8.Պայմանագրի 1.1 կետում նշված անշարժ գույքի՝Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, համայնք Արթիկ ք., Ե. Չարենցի փողոց, թիվ 3/1(երեք կոտորակ մեկ)-3/2(երեք կոտորակ երկու) գրասենյակ հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ՝սահմանափակումներ գրանցված չեն, համաձայն Անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ թիվ ՄՏ-12122022-08-0387 միասնական Տեղեկանքի, տրված՝ Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանումից, որի տվյալները լրացված են 12.12.2022(տասներկուսը դեկտեմբերի երկու հազար քսաներկու)թվականի դրությամբ:

9.Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որից մեկ օրինակը պահվում է նոտարական գրասենյակի գործերում, իսկ մյուսները տրվում է Կողմերին առձեռն:

10.Նոտարի ներկայությամբ Համաձայնագիրը ստորագրող Կողմերը հայտարարում են, որ իրենք գործունակ են, ամբողջովին գիտակցում են և հասկանում Համաձայնագրով նախատեսված բոլոր կետերի իմաստը և նշանակությունը, ինչպես նաև հայտարարում են, որ Համաձայնագիրը

ստորագրում են կամավոր և իրենց համար ձեռնտու պայմաններով:
11.Համաձայնագիրը բարձրաձայն ընթերցվել է նոտարի կողմից և պարզաբանվել գործող օրենսդրության նորմերը:
12.Համաձայնագրի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարական գրասենյակում պահվող օրինակին:

«Կողմ-1»՝ ԹՈՐԳՈՄ ՄՈՒՇԵՂԻ ՄԿՐՏՉՅԱՆ

1. _____

«Կողմ-2»-ի լիազորված անձ՝ ՏԱՐՈՆ ՀԵՆՐԻԿԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

1 _____

14/12/2022 երկու հազար քսաներկու թվականի դեկտեմբերի տասնչորսին, սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ Հայաստանի Հանրապետության <<ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ>> նոտարական տարածքի նոտար ԳԱԳԻԿ ՍԱՄՎԵԼԻ ԲԶՆՈՒՆՈՒՍ կողմից: Համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Համաձայնագիրը ստորագրած անձանց ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը և նրա ներկայացուցչի լիազորությունները ստուգված են:

Գրանցված է գրանցամատյան թիվ ----4941----ով

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Գագիկ Սամվելի Բզնունի